ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Էմիլ Գրիգորյանի անվան Երևանի Ոսկերչական գործարան ԲԲԸ-ն ՀՀԿԳՄՍՆԵԱՃԱՊՁԲ-23/32 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
2	Գնման առարկա են հանդիսանում մեդալները (ԿԳՄՄՆ) 1. Նյութը – արույրի հատուկ համաձուլվածք, ոսկեզօծ, փայլատ է 2. Մեդալի քաշը – ոչ պակաս քան 35 գրամ 3. Տրամագիծը – 53.5 մմ 4. Հաստությունը – 2.7 մմ 5. Ոսկու հարգը – բարձր 995-ից 6. Տուփը – 30x105x105 մմ չափերի, պատրաստված է փայտից կամ նրան փոխարինող նյութից, ներկված է մուգ դարչնագույնով, կապարիչի վրա ոսկեգույնով տպագրված է ««Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն»» բառերը, ներսից ունի մեդալի արտաքին եզրագծին համապատասխան խոռոչ մեդալի ճշգրիտ դիրքավորման համար: Տուփը բացվում է զսպանակային հատուկ ծղնիների միջոցով՝ դիմացի կողմից դեպի վերև: Կապարիչի ներսից՝ ձախ կողմից դեպի ներքև անցնում է 5-7 մմ երկարության թավշյա ժապավեն թղթե հավաստագիր տեղադրելու համար: Այլ՝ մեդալը ենթարկվում է գալվանական մշակման և ոսկեպատվում է բարձր հարգի ոսկիով: Մեդալի դիմերեսին պատկերված են կրթության, գիտության, մշակույթի և սպորտի խորհրդանշական ռելիեֆային պատկերներ, իսկ դարձերեսին ՀՀ զինանշանն է և «« ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն»» գրվածքը: Մեդալի կողային մասում շրջանագծով, ուռուցիկ տառերով գրված են ««ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ»» բառերը: Մեդալի միանմանությունը և բարձր որակն ապահովելու համար այն պատրաստվում է Թ.Ճ.Կ հաստոցներով և բարձր տեխնոլոգիաների կիրառմամբ: Ոսկե մեդալն ունի իսկության հավաստագիր: Մատակարարումը –դրված համապատասխան տուփի մեջ: «Փոխադրումը և բեռնաթափումը» - Վաճառողի կողմից: Ապրանքները նոր են և չօգտագործված:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Ереванский ювелирный завод имени Эмиля Григоряна ОАО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-23/32 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
2	